ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ապրիլի 17-ին ժամը 16:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երրորդ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 14 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երկրորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գրիգոր Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Հրավիրված նիստին հարգելի պատճառներով՝ հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվելու պատճառով բացակայում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ավագանու նիստին չներկայացած մնացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը: Նախագահողը հայտարարեց, որ նախապես օրակարգով ներկայացված 12-րդ հարցը՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 107-Լ որոշմամբ հաստատված հավելված թիվ 3-ի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», օրակարգից հանվում է, քանի որ դրա անհրաժեշտությունը վերացել է և առաջարկեց օրակարգը հաստատել առանց այդ հարցի:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի 2024 թվականի ապրիլի 17-ի երրորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27 - Ի N 105-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԲ.Մ.ՄԱՇՏՈՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 10 ԵՎ ԹԻՎ 12 ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿՈՒՄ ԱՆՄԽԻԹԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 87-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի ԹԻՎ 47 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ 2-Ը ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

10. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՃԻԿՅԱՆ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ՄԻ ՇԱՐՔ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 27-Լ որոշումը:

Արձանագրվում է, որ «Աղբահանության և բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման դիմաց գանձվող վճարները զիջելու մասին» և «Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան թիվ 1 շենքի մի շարք բնակիչներին ֆինանսական օգնություն հատկացնելու մասին» որոշումներով նախատեսված զիջումներն ու ֆինանսական օգնություն հատկացնելու համար, այդ որոշումների հիմքերը և հիմնավորումները պահպանվելու են այդ աշխատանքների ընթացքն ապահովող համապատասխան հիմնարկում և/կամ բաժնում:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27 - Ի N 105-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 28-Ն որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի 2024 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար հերթագրվեց ավագանու անդամ Արմեն Դավթյանը:

Արմեն Դավթյան, հարց: Ծախսերի մասում նշված 123 մլն դրամ գումարում ներառված է նախորդ տարվա պարտք՝ ասֆալտապատման համար:

Լուսինե Քալաշյան, պատասխան: Ոչ, ներառված չեն:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 29-Լ որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը, համազեկուցող՝ «Բարեկարգում տնօրինության» տնօրենի տեղակալ Արթուր Սիմոնյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոց փողոցի թիվ 10 և թիվ 12 շենքերի բակում անմխիթար վիճակում գտնվող կոյուղագծերի փոխարինման աշխատանքներ ձեռք բերելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար հերթագրվեցին ավագանու անդամներ Արմեն Դավթյանը և Էդգար Թամազյանը:

Արմեն Դավթյան, հարց: Ինչպես ասեցիք Վեոլիա ջուրը հանձն է առել խողովակները տրամադրել, իսկ չենք կարող խողովակների համար սահմանված 12մլն գումարը չներառել աշխատանքների ընդհանուր գումարում:

Արսեն Պետորսյան, պատասխան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռ մենք չունենք խողովակները և բանակցություններ են ընթանում, ուստի պետք է այդ գումարը ներառվի, իսկ երբ կտրամադրվեն, խողովակների գումարը կնվազեցվի:

Էդգար Թամազյան, հարց: Իսկ մենք բացի ներկայացված շենքերի կոյուղիների խնդիրներից, այլ շենքերում խնդիրներ ունենք, իսկ չենք կարող Վեոլիա ջրին պարտադրել հենց ինքը կատարի այդ աշխատանքները:

Արսեն Պետորսյան, պատասխան: Քաղաքի կոյուղին բավականին հին է և խնդիրներ կան, սակայն համայնքը չի կարող պարտադրել Վերոլիա Ջուր ընկերությանը վերանորոգել կոյուղիները, իսկ այս հարցը հրատապ է, ուստի համայնքը ստանձնել է այն կատարել:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 30-Ա որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը կրթության և մշակույթի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 87-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 31-Լ որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի փոխարինող, առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նոր կազմը հաստատելու և Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի թիվ 47 որոշմամբ հաստատված հավելված 2-ը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 32-Լ որոշումը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացնելով Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար հերթագրվեց ավագանու անդամ Արմեն Դավթյանը:

Արմեն Դավթյան, հարց: Մենք հետագայում կարող է խնդիրներ ունենանք հարևանների կողմից, շինություն կառուցելու վերաբերյալ, անհրաժեշտ չէ արդյո՞ք հարևանների համաձայնությունը:

Վասպուրական Դավթյան, պատասխան: Նշված փուլում հարևանների համաձայնությունը անհրաժեշտ չէ, հետագայում շին. թույլտվություն տալու համար անպայման կներկայացվի:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 33-Ա որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացնելով նախնական համաձայնություն տալու համար որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 34-Ա որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Վասպուրական Դավթյանը:

Ներկայացնելով նախնական համաձայնություն տալու համար որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 35-Ա որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Միհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով անշարժ գույքեր ձեռք բերելու թույլտվություն տալու վերաբերյալ որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու հերթագրվեցին ավագանու անդամներ Արմեն Դավթյանը:

Արմեն Դավթյան, հարց: Իսկ մենք մոտավոր հաշվարկ ունենք ինչ գումարի մասին է խոսքը:

Արսեն Պետորսյան, պատասխան: Ոչ չունենք, կախված մեր բյուջեի չափերից և անհրաժեշտությունից ելնելով կիրականացվեն գնումները:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 36-Լ որոշումը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Վաղարշապատի համայնքապետարանի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի պետ Արմեն Մելքոնյանը:

Ներկայացնելով աղբահանության և բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման դիմաց գանձվող վճարները գիջելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու հերթագրվեցին ավագանու անդամներ Արսեն Պետրոսյան:

Արսեն Պետրոսյան, հարց: Բնակ վարձը և աղբահանության վճարները ինչու են գիջվում:

Արմեն Մելքոնյան, պատասխան: Բնակարանային վարձը գիջվում է քանի որ, բնակիչները իրենց միջոցներով իրականացրել են շենքի պահպանման ծախսեր, իսկ աղբահանության վճարները գիջվում են հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բնակարաններում բնակվողներ չեն եղել:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 37-Ա որոշումը:

Օրակարգի 11-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Վաղարշապատի համայնքապետարանի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի պետ Արմեն Մելքոնյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կարճիկյան թիվ 1 շենքի մի շարք բնակիչներին ֆինանսական օգնություն հատկացնելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 38-Ա որոշումը:

Օրակարգի 12-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի փոխարինող, առաջին տեղակալ Արսեն Պետրոսյանը:

Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 14 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 39-Լ որոշումը:

Ավագանու նիստն ավարտվեց 2024 թվականի ապրիլի 17-ին ժամը 17:10-ին:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: